Իսկ Պատմիչք Արարատեաց ասեն, թէ յետ առման Անտիոքայ արշաւեցին Լատինք 'ի կողմանս Միջագետաց, և պաշարեալ զՄատաթայ քաղաք՝ առին զայն եւ 'ի սուր հանին զբնակիչս նորին աւելի քան զ100,000 ոգիս, և զմանկագոյնսն գերի վարեցին, և նստան անդ զաւուրս քառասուն։ Երթայ զգրունս առաջի նոցա եւ քաղաքն Եմէս, որպէս և Բալտուվին կոմսն, եղբայր Կոնդոպրեայ տիրեալ էր յառաջագոյն քաղաքին Եդեսիոյ։ Այլ փոսն երկար ճոնապարհորդութեան արշաւանայ և պէսպէս գործոց, մարտից և պատերազմացն Լատինաց զոր մղեցին ընդդէմ Արաբաց և Թուրքաց, և տիրելոյ քաղաքացն Ասիոյ, և թէ ո՛րպէս 'ի փոանդի սովունյօգնութիւն հասին նոցա իշխանքն Հայոց Կոստանդին, Բաղունի և Օշին, եւ կրօնաւորք վանօրէից Սեաւ լերին, և առատութեամբ լցին զամենայն պէտս նոցա, և զայլ ամենայն բարիսն՝ զոր ցուցին Հայք Խաչակիր զօրացն Լատինաց, Տե՛ս 'ի Գիրս Մատթ. Ուրհայեցոյ Երես 314. և 'ի Գիրս Հ. Մ. Զարհեան. Պատմ. Հայ. Գ. 19։

Զկնի այսր ամենայնի դարձոյց Կոնդոպրէ զքէնս իւր դէպ 'ի Հրէաստան. կոտորեալ 'ի Ճանապարհին զընդդիմակացս իւր, եհաս յԱսկաղոն քաղաք ծովեզերեայ, ուր եգիտ խոջ զբանակ Խալիֆային Եգիպտոսի, որոյ զօրագլուխ կացեալ էր նա ինքն նախայիշեալն Աֆտալ. սակայն եհար զնոսա և ցրուեաց եւ կոտորեաց զբազումս, եւ մնացեալքն գնացին փախստական հանդէպ երեսաց իւրեանց և զօրավարն Աֆտալ զերծաւ յեղիսլտոս։ Ապա յառաջ խաղացեալ անտի յաղթանակաւ տիրեցին Ռեմլէ քաղաքի, և հասին յԻմմաուս։ Մտին Տանկրէտ և Բալտուվին 'ի Բեթղէհէմ 'ի ՅՆ Յունիսի. իսկ եւ իսկ պաշարեցաւ մայրաքաղաքն Հրէաստանի. ապա կանգնեալ զմեքենայս և զայլ գործիս պատերազմի՝ մարտ եդեալ կռուէին զաւուրս քառասուն։ Այն ինչ տեսեալ Լատինաց ըզդըզրդումն քաղաքին՝ դշխոյթ և զոսգնալ պաշարելոյ, որք յուսահատեալ իսկ 'ի կենաց՝ առ հասարակ խուժէին 'ի մզկիթն Օմարայ. հեղան զեղան անդ 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, պատգամ առաքեցին առ նոսա Լատինք և ասեն, զի եթէ յետ երից աւուրց ոչ ելանիցէք 'ի տաճարէ այսի, կոտորեսցուք զձեզ անխնայ։ Իրրեւ լու եղեւ